ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ
2021 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1/1
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի
ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ

2021 թվականի դեկտեմբերի 17-ին ժամը 12:00-ին Վաղարշապատ համայնքի ավագանու նստավայրում՝ քաղաք Էջմիածին, Սբ.Մ.Մաշտոցի փողոց 0 հասցեում տեղի ունեցավ Վաղարշապատ համայնքի նորընտիր ավագանու՝ օրենքի ուժով գումարված առաջին նիստը, որին մասնակցում էր Վաղարշապատ համայնքի ավագանու 25 անդամ, հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

Վաղարշապատ համայնքի նորընտիր ավագանու առաջին նիստին հրավիրված էին մարզպետարանի ներկայացուցիչներ, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու լուսարարապետը, Արմավիրի թեմի առաջնորդը, մարզային և համայնքային կառույցների ներկայացուցիչներ, նախկին ավագանիներ, Էջմիածին քաղաքի պատվավոր քաղաքացիներ, հանրակրթական ուսումնական հաստատությունների և ՀՈԱԿ-ների տնօրեններ, քաղաքային կազմակերպությունների ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ:

Նիստին ներկա էին նաև ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի՝ նիստը վարում էր ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամ Վարդան Գրիգորյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Գ.Հարությունյանը:

Նիստը սկսվեց Հայաստանի Հանրապետության հիմնով:

Նիստն անցկացվում էր առցանց հեռարձակմամբ:

Հիմք ընդունելով թիվ 14 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 42-Ա որոշումը՝ Վարդան Գրիգորյանը հայտարարեց, որ Վաղարշապատի համայնքի ավագանին ընտրվել է և մանդատները բաշխվել են հետևյալ կերպ՝

1) «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն՝ 15 մանդատ,

2) «Էջմիածին» կուսակցությունների դաշինք՝ 10 մանդատ,

3) «Հայրենատեր» կուսակցություն՝ 2 մանդատ:

Թիվ 14 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 16-ի «Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու ընտրված անդամներ գրանցելու մասին» N23 արձանագրության համաձայն՝ Վ. Գրիգորյանը ներկայացրեց ավագանու անդամներին, կարդալով յուրաքանչյուրի անունը, ազգանունը, կուսակցության անվանումը.

1. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն

Գասպարյան Դիանա Մնացականի
Պետրոսյան Արսեն Հովհաննեսի
Ափոյան Էդվարդ Լեվոնի
Բասենցյան Նաիրա Ռոբերտի
Միրզոյան Արամայիս Աշոտի
Ղազարյան Գևորգ Զավենի
Միրզախանյան Լիլիթ Արմենի
Կարապետյան Անդրանիկ Կարապետի
Մելիքյան Ներսես Ռոբերտի
Գրիգորյան Վարդան Գառնիկի
Մովսիսյան Կարեն Սամվելի
Նիկողոսյան Գոհար Մոսիտի

Հախվերդյան Վահան Փառնակի
Ավետիսյան Հրաչյա Վալերիկի
Կիրակոսյան Աննա Խաչատուրի

2. «Էջմիածին» կուսակցությունների դաշինք
Խաչատրյան Սևակ Սասունի
Ղարիբջանյան Վահրամ Արամի
Գրիգորյան Նաիրա Նորիկի
Գևորգյան Կարեն Յուրիի
Օհանյան Նորայր Սարգսի
Պատուրյան Էմմա Մայիսի
Թամազյան Էդգար Վարդանի
Դավթյան Արմեն Աղասու
Հակոբյան Քրիստինե Վոլոդյայի
Ենոքյան Ռուբիկ Ենոքի

3. «Հայրենատէր» կուսակցություն
Աբրահամյան Ջիվան Արտաշեսի
Միքայելյան Կարինե Մերուժանի

Նիստը վարող Վ.Գրիգորյանը հանդես եկավ հայտարարությամբ, այն մասին, որ Վաղարշապատ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրությունների արդյունքով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստացել է ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.2-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու թեկնածուների ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող Դիանա Մնացականի Գասպարյանն օրենքի ուժով համարվում է ընտրված Վաղարշապատ համայնքի ղեկավար:

Վարդան Գրիգորյանը հայտարարեց և առաջարկեց քննարկել և հաստատել 2021 թվականի դեկտեմբերի 17-ի Վաղարշապատ համայնքի ավագանու նիստի օրակարգի որոշման նախագիծը և օրակարգի հարցը:

Օրակարգի նախագիծը դրվեց քվեարկության:

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Վաղարշապատ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 17-ի նիստի օրակարգը և քննարկել առաջադրված հարցը, այն է՝

1. Դիանա Գասպարյանի կողմից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնը /լիազորությունները/ ստանձնելու համայնքի ղեկավարի երդման արարողության կարգը հաստատելու և պաշտոնի ստանձնման երդման տեքստն ի գիտություն ընդունելու մասին:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 25 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 16
դեմ – 0
ձեռնպահ – 9

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

Էջմիածին քաղաքի ավագանին ընդունում է թիվ 1 որոշումը:

Օրակարգի 1-ին հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամ Վարդան Գրիգորյանը:

Ներկայացնելով՝ Դիանա Գասպարյանի կողմից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնը /լիազորությունները/ ստանձնելու համայնքի ղեկավարի երդման արարողության կարգը հաստատելու և պաշտոնի ստանձնման երդման տեքստն ի գիտություն ընդունելու մասին նախագիծը:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման փուլի ավարտից հետո Վ.Գրիգորյանը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 25 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 15
դեմ – 0
ձեռնպահ – 9

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

Էջմիածին քաղաքի ավագանին ընդունում է թիվ 2 որոշումը:

Վ.Գրիգորյանը առաջարկեց ընդունել ի գիտություն 2021 թվականի դեկտեմբերի 17-ից օրենքի ուժով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավար ընտրված Դիանա Գասպարյանի կողմից լիազորությունների ստանձնումը և հրավիրեց Վաղարշապատ համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանին ընթերցելու երդման տեքստը:

Համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանի կողմից ընթերցվեց և ստորագրվեց երդման տեքստը:

Էջմիածնի համայնքապետարանի «Պատմա-ազգագրական թանգարան» ՀՈԱԿ-ից բերվել էր համայնքի ղեկավարի լանջաշղթան, որը նորընտիր համայնքի ղեկավարին հանձնեց Վաղարշապատ համայնքի ավագանու անդամ, Էջմիածին քաղաքի պատվավոր քաղաքացի, արվեստագետ Ներսես Մելիքյանը:

Համայնքի ղեկավարի կողմից ստորագրված երդման տեքստն ի պահ հանձնվեց Էջմիածնի համայնքապետարանի «Պատմա-ազգագրական թանգարան» ՀՈԱԿ-ին:

Օրակարգի հարցերը սպառվելուց հետո Ավագանու նիստը հայտարարվեց փակված:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ